ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԵՎ ԵՎՐՈԴԻԱԿՈՆԻԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ

(22-24 նոյեմբերի 2005 թ.)

Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի և Եվրոդիակոնիա կազմակերպության համատեղ հանդիպմանը, որ տեղի ունեցավ սույն թվականի նոյեմբերի 22-24-ը Բրյուսելում, մասնակցում էին Եկեղեցիների 60 ներկայացուցիչներ Եվրոպայի 30 երկրներից:

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ Հայ Առաքելական Եկեղեցին այդ հանդիպմանը ներկայացնում էր Հոգեշնորհ Տ. Տաթև վրդ. Հակոբյանը:

Հանդիպման նպատակն էր՝ դիտարկել Եվրոպայի սահմանադրության ապագան՝ ի մասնավորի կենտրոնանալով եվրոպական սոցիալական մոդելի զարգացման վրա: Քննարկվող հարցերից մեկը հետևյալն էր, թե ինչպես ենք մենք ցանկանում ապրել միասին՝ որպես սոցիալապես պատասխանատու հասարակություն, օրինակ, 2030 թվականին:

Բացման խոսքում Շվեդիայի Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս Կարլ Գուստավ Համմարն ընդգծեց Եկեղեցիների դերը Եվրոպայի սոցիալական զարգացման գործում. «Եկեղեցիների աջակցությունը Եվրոպայի սոցիալական խնդիրներին պետք է լինի ավելին, քան պարզապես աջակցել Եվրոպայի սոցիալական օրակարգի որոշ առաջնային խնդիրներին: Այդ աջակցությունը պետք է առավել արմատական լինի (բառի բուն իմաստով)՝ փնտրելով մեր սոցիալական գործունեության արմատները: Որպես Եկեղեցիներ՝ մենք պետք է դուրս գանք տնտեսական աշխարհում համեմատության և մրցակցության, շահելու և պարտվելու սահմաններից և շեշտադրենք, թե ինչն է մեզ միավորում, հիմնական մի արժեք, որը տրվում է և ոչ թե նվաճվում մրցակցության մեջ, ընդհանուր ձգտում խաղաղության և արդարության նկատմամբ...»:

Մասնակիցների բանավեճերի հիմքում ընկած էր եվրոպական սոցիալական մոդելի կամ տարբեր սոցիալական մոդելների հետագա զարգացման հարցը: Այս քաղաքական բանավեճերի հիմնական գաղափարը պայմանավորված էր Եվրոպայի սոցիալական մոդելի համար ընդհանուր տեսիլքի բացակայությամբ:

Դոկտոր Գեորգ Հենրիխ Համմերը՝ Ֆրիեդեհորսթ Հիմնադրամի տնօրենը (Բրեմեն, Գերմանիա), իր խոսքում նշեց, որ թերևս ամենախնդրահարույց բանը, որ պակասում է եվ-

ռոպական քաղաքականության մեջ, հոգևոր կողմն է: Լավագույն տնտեսություն դառնալը ռազմավարական նպատակ է, սակայն ոչ թե տեսիլք, որը ոգեշնչում է մարդկանց: Իսկ եթե մարդիկ պետք է շատ աշխատեն և տառապեն Եվրոպայի համար, ապա նրանք առնվազն պետք է ունենան սոցիալական տեսիլք և ընդհանուր ոգի՝ նոր համայնք կառուցելու համար:

Վերջին տարիների ընթացքում Եվրոմիությունը պատասխանատվություն է սպանձնել ապահովել աշխատանքի բարձր մակարդակ, պատշաճ սոցիալական պաշտպանվածություն, կրթության բարձր մակարդակ և մարդկանց առողջության պահպանում: Սակայն այս նպատակներն ինչպես են իրագործվում Եվրոպայի սոցիալական քաղաքականության մեջ, սոցիալական բյուջեում, սոցիալական կառուցվածքային ծրագրերում և օրակարգում, ահա սրանք էին այն հարցերը, որոնց անդրադարձան ժողովի մասնակիցները:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին